

Ս. ՕԳՈՒՏԻՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ՍՈՒՐԵ ԳՐՈՑ ՀԱՍԿԱՑՈՒՄ ՈՒ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՇԱՄՐՀ ԹԵ՝  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(ԵԿԶԵԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՅԻ  
ԱՍԱԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ)

Ռումիկ Քռչարյան

Փիլիսոփայության զիտությունների թեկնածու,  
Մ.Մաշտոցի անվ. Մատենադարանի ապագ զիտաշխատող

Քրիստոնեության տարածման և՝ սկզբնաշրջանում, և՝ ապա՝ միջին դարերի բովանդակ ժամանակընթացում, Մերձավոր Արևելքում ու Եվրոպայում հայրախոսության ու սրբաւստիկայի կայացման ժամանակաշրջանում որպես ներքին կարիք ու անհրաժեշտություն էր նկատվում՝ թարգմանել, ճշմարիտ հասկանալ ու մեկնաբանել Հին ու Նոր Կտակարանները։ Աստվածաշունչ Գրերից և Եկեղեցու առաքելական ավանդությունից ուսայալ մտածողները, Սուրբ Եկեղեցու Հայրերը, քրիստոնեության վարդապետության ներկրթյալ և ուսուցանող ամենայն հոգևոր պաշտոնյանները Սուրբ Գրոց ստույգ իմաստի ու իմաստության խորհուրդի հասկացման իրենց հոգևոր փորձառությունն են արտահայտել քրիստոնեական ուսմունքի կենսամշակույթում ու գրամշակույթում։ Ընդ որում, և՝ կենսամշակույթում, և՝ գրամշակույթում այդ հոգևոր փորձառությունը ներկայանում է իր բազմաբովանդակ իսկությամբ։ Նրանց հոգևոր փորձառությունից քրիստոնեական ուսմունքի գրամշակույթում ամենքին հայտիմաց իրենց կերպառությունն են ունեցել Սուրբ Գրոց ոչ միայն ստույգ իմաստի ու խորհուրդի զիտահասկացումն ու զիտամեկնությունը (Եկզեգետիկան), այլև ուսույն այդ զիտահասկացման ու մեկնաբանության և բուն իմաստնացման ինչն ու ինչպեսը, նույնն է թե՝ որպիսում և կամ իսկությունը բացահայտող և այդկերպ՝ արդեն նաև մեկնագիտությունը (հերմենևտիկան) որպես այդպիսին կայացնող ու հենց բովանդակությունը կազմող սկզբունքները, մերողները, օրինաչափություններն ու կանոնները։ Իսկ մինչ Սուրբ Գրերում ասացյալի իմաստին ու իմաստությանը բանահատու լինելը (յրազմենու), նախ և առաջ, հենց բանահատության (զիտահասկացման) ու զիտամեկնության բուն իսկությունը, «ինչն» ու «ինչպեսը»

հայտնացուցող սկզբունքների, օրինաչափությունների ու կանոնների իմացահայտումը՝ այդկերպ արդեն բանահատության ուսույալ անձանց հնարավորում, նպաստում ու ապահովում է նպատակայինը Աստվածաշունչ Գրոց մթին դարձվածքների իմաստների ճշխմաց բացորդշումը:

Միջին դարերում՝ քրիստոնեական կյանքի և բանավոր ու գրավոր մշակութային ավանդության սկզբնավորման ու կայացման ողջ շրջանում մեկնագիտությունը (հերմենևտիկան) չի գործառնել իբրև ուրույն, առանձին ուսմունք և ուսուցակարգ: Միջնադարի քրիստոնեական վարդապետության շրջանակներում հերմենևտիկան հիմնվում ու կայանում, ինքնահասկանում ու գործառնում է որպես աստվածաբանությանն ու հոեստորությանը ներհյուս ու օժանդակ գիտակարգ, հոեստորությունն այստեղ հասկանալով որպես եկեղեցական խոսքարվեստ:

Նկատենք, որ միջնադարյան քրիստոնեական մշակութային ավանդությունում հոեստորությունն էապես տարբեր է անտիկ հունորության արվեստից: Հոեստորությունն իրենում ունի տեսական և գործնական բաղադրատարբեր: Հոեստորության արվեստը, որպես ուսուցակարգ, ներկայանում է որպես տեսական խորհրդածությամբ և գործնական կատարումով կայացող գիտելիք: «Հոեստորության» գիտելիքի բնույթն, ըստ Գաղամերի բնորոշման, «արվեստ ուսուցանող» է և ծառայում է պերճախոսության արվեստին: Իր գիտելիքի բնույթով այդկերպ «արվեստ ուսուցանող» է նաև պոետիկան, իր ուսուցողական ծառայությունը մատուցելով բանաստեղծական արվեստին և պոետական ստեղծագործությունների գնահատմանը<sup>1</sup>:

Անտիկ հույն սովորությունների բանարվեստում սկզբնավորվելով, առհասարակ, հոեստորությունը կամ ձարտասանությունը սահմանվում է ոչ ըստ իր առարկայի, այլ միայն ըստ իր կատարումի. «Ճարտասանութիւն է հաւանութեան արարչական»<sup>2</sup>, որի պատճառով և այդ սահմանումը կատարյալ չէ, «քանզի ոչ միայն ճարտասանութիւն է հաւանութեան արարիչ, այլև տրամաբանական

<sup>1</sup> Տե՛ս Գադամեր Խ.- Ղ., Իտինա և մեթոդ, Մ., 1988, էջ 226:

<sup>2</sup> Դաւիթ Ալյադը, Սահմանը իմաստափրութեան - Երկասփրութիւնը փիլիսոփայականը, Եր., 1980, աշխ. Ս. Արևշատյանի, էջ 51:

իմաստասիրութիւնն»<sup>3</sup>: Հռեսորությունը հավանություն և-կամ համոզում է արարում՝ բանարվեստային իր ամենայն արտահայտություններում ոչ միշտ սկզբունքային նպատակ առաջադրելով ճշմարտության իմացահայտումը, այլ մարդկային կյանքում՝ հանուն միմիայն հավանության և-կամ համոզման արարման՝ բանարվեստի կիրառման ճշմարտավրեալ որևոր կանխադրյալ իր նպատակներին ենթակարգելով կամ ենթադասելով բուն ճշմարտությունը: Սակայն, ի տարբերություն «հավանության (և-կամ համոզումի - Ռ. Ք.) արարման» իդեայով իր ներքին ու արտաքին կերպավորությունն ունեցող անտիկ հունական հոետորության արվեստի, Միջնարարյան քրիստոնեական Եկեղեցու աստվածաբանական գիտությունների ու արվեստների մեջ տրամագծորեն այլ է հոետորության բուն իդեան և ըստ այդմ՝ նաև ներկառուցվածքը: Քրիստոնեական հոետորության կոչումի, իդեայի ու այդ իդեային մտահայեցող դիտավորության և ըստ այդմ՝ կերպարանումի ու կատարումի բուն իսկությունը միջոցների մեջ խորականություն չդնելով ու ամեն գնով, այդ թվում՝ նաև ոչ-բարոյական միջոցներով և նույնիսկ կեղծիքներով ու ոչնչարարությամբ այլոց համոզելու նպատակին հասնելը չէ: Միջնադարում Եկեղեցական հոետորությունը կամ խոսքարվեստը իր դիտավորությամբ ու կատարումով ներկայանում է «Աստծո Բանի քարոզության» իդեայով իր ներքին ու արտաքին կերպարանմամբ: Միջին դարերի քրիստոնեական հոետորությունը, ըստ իր բուն կոչման ու իսկության, աստվածայինն ու հենց ճշմարտությունն՝ ի փրկություն մարդկանց բանախոսելն է: Աստ՝ հոետորությունն իր կոչմանը համապատասխան գոյությամբ՝ ներկայանում է և հարկ է այն հասկանալ որպես Եկեղեցական խոսքարվեստ, որի դիտավորությունը, ըստ այդմ՝ կերպարանմամբ ու կատարումն է՝ հասկանալ իսկությունը և մեկնողաբար այն բացարոշել՝ ուստամասեր այլոց մատուցելու համար:

Քրիստոնեական հոետորությունն իր իսկական գոյությամբ ներկայանում է՝ առ Աստված առինքնաղ Եկեղեցական կյանքում ճշմարտությունն ու բարին, որպես մարդկային կեցության համար անհրաժեշտ ու նախընտրելի պիտույքուն, հասկացող ու

<sup>3</sup> Նույն տեկում:

մատուցանող **խոսքարվեստ** ու հենց **տեսություն՝** անիրաժեշտ ու օգտակար եկեղեցական քարոզիտության: Ասվածը, սակայն, չի նշանակում, թե նույն միջնադարում բանափոր և-կամ գրափոր իր արտահայտությամբ հուտորությունը երբեմն չի կայացել իր անխիսկական գոյությամբ՝ իր բուն կոչումից և ըստ այդմ իր գոյության իսկությունից օտարացյալ ներքին ու արտաքին կերպառությամբ:

Էական է նկատել, որ թեև միջնադարում մեկնագիտությունը (հերմենևստիկան) պրակտիկորեն գործառնում էր որպես աստվածաբանությանն ու հուտորությանը ներիյուս ու օժանդակ գիտակարգ, այնուամենայինիվ, հերմենևստիկայի խնդրակարգն ու կատարումը հիմնարար է նրանց համար: Հերմենևստիկայի խնդրակարգն ու կատարումը սկզբունքորեն գերազանցում է հուտորության և նույնիսկ քրիստոնեական հուտորության խնդրակարգն ու կատարումը: Քանզի մինչ աստվածաշունչ ամենայն գրերում հայտնյալ Աստծո Բանի քարոզիտությունը, առաջնահերթորեն անիրաժեշտ է այդ գրերում ասացյալի ստույգ հասկացում ու մեկնություն: Իսկ Սուրբ Գրերում ասացյալին ստուգությամբ վերահասու լինելու համար առաջնահերթորեն հարկ է հարցադրել ու առաջադրել ստույգ հասկացման ու մեկնության որպիսության բացահայտումը և ապա՝ կիրառել այն աստվածաշունչ ամենայն գրոց նկատմամբ, որ և աստվածաշնչյան հերմենևստիկայի խնդիրն ու կատարումն է: Առավել զարմանալի է միջնադարյան հերմենևստիկայի հարաբերակցությունը աստվածաբանությանը, քանզի նախապես՝ հասկացման ու մեկնության որպիսությունը բացահայտելով, այնուհետ աստվածաշունչ ամենայն գրերի բովանդակային, ճշմարիտ իմաստին հասու դատնալու ու մեկնելու իր դիտավորությամբ ու կատարումով արդեն հերմենևստիկան սկզբունքորեն նույնանում է աստվածաբանությանը:

Աստվածաշունչ մատյանում ասացյալի բանահասության (հասկացման), որում և ներկայող ու բուն կատարում՝ մեկնաբանության, պրակտիկայի ու տեսության երկմիասնական՝ փոխազահանջող, փոխներթափափանցված ու հենց փոխիրուսված ներակայակցության բացառիկ ու հազվագյուտ օրինակներից են Որոգինեսի ու ս. Օգոստինոսի Երանելու երկերը: Մեկնագիտության քրիստոնեական գրամշակույթում այս հետինակների երկերին՝ նույնաբնույթ փոխներիյուսվածությամբ օժոված նախորդել, նախնական կերպօրինակ

ու աղբյուր են հանդիսացել, կրթանշանակրորեն ուղինապատ կամ հակազդեցությամբ՝ ի նպաստ ներգործություն ունեցել Փիլոն Ալեքսանդրացին, Կղեմես Ալեքսանդրացին, դրատական Տիկոնիոս (Տիխոն) Աֆրիկացին և այլն: Մասնավորապես, Օգոստինոսի էկզեգետիկական երկերից և հենց հերմենետիկայի վերաբերյալ նրա «Քրիստոնեական գիտություն» աշխատությունից արդեն հայտիմաց ու մասնագիտական գրականությունում հետազոտողների ուսումնասիրություններում հաստատագրված է, որ նախքան իր երկի հրապարակումը նա ծանոթ է եղել Աստվածաշունչ Գրոց մեկնության այլոց աշխատությունների ու նոյնիսկ մեկնության կանոններ հայտորոշող Տիկոնիոս Աֆրիկացու աշխատությանը:

Օգոստինոսի Երանելու «Քրիստոնեական գիտություն» աշխատությունում սկզբունքորեն նպատակառուղիվածությամբ բացորոշ առաջադրելով «աստվածաշնյան մեկնագիտության» խնդրակարգ, թե՝ Աստվածաշունչ Գրերում ասացյալն ինչպես ստույգ հասկանալ ու նաև մեկնարանել՝ այլոց ի գիտություն, մեկնագիտության ուսումնասիրության բազմաբովանդակ առարկայի ու կատարումի հայտորոշմամբ՝ ներկայացվում է քրիստոնեական մեկնագիտության ամբողջական հայեցակարգ: Սահմանելով իր աշխատության դիտավորության ամբողջական խնդրակարգը, նա գրում է. «Գիտականորեն (աստ՝ գիտունաբար և կամ իմաստնորեն – Ո. Ք.) ուսումնասիրելով Սուրբ Գիրքը, հարկ է նկատի ունենալ երկու գլխավոր խնդիրներ, ա) Սուրբ Գրքի ճշմարիտ իմաստը գտնելու եղանակը», այսինքն՝ հասկացումը և ապա «բ) այդ իմաստը այլոց հաղորդելու կամ շարադրելու եղանակը»<sup>4</sup>, այսինքն մեկնարանաւորյունը: Նրա հոգևոր փորձառությունում Աստվածաշունչ Գրերի կոնկրետ ու բովանդակային մեկնությունների ու բուն գիտամեկնության (էկզեգետիկայի) ինքնահասկացմամբ սկզբնադրվում եր «աստվածաշնյան մեկնագիտությունը» (հերմենետիկան): Կարելի է ամրագրել, որ «աստվածաշնյան

<sup>4</sup> Ste' u Cameron M., Augustine and scripture – A companion to Augustine, ed. by M. Vessey with the assistance of Shelley Reid, Wiley- Blackwell, A John Wiley & Sons, Ltd., Publication, 2012, էջ 201. Edvards M., Augustine and his christian predeceassors – Աշվ. աշխ., էջ 219. 215- 226. Неретина С., Огурцов А., Пути к универсалиям, Издательство Российской Христианской гуманитарной академии, СПб, 2006, с. 178 և այլն:

<sup>5</sup> Августин Блаженный, Христианская наука, или Основания св. Герменевтики и церковного красноречия, Киев, 1835, с. 13.

հերմենևտիկայի՝ ուղղակիորեն որպես կոնկրետ գործնական գիտամեկնության («էկզեգետիկայի») ինքնահասկացում ու տեսաբանություն կայացումը և արդ մեկնազիտական (հերմենևտիկական) աշխատությունների ստեղծումը նշանավորում է Աստվածաշունչ Գրերի ուսումնասիրության, բանահասության (հասկացման) ու մեկնության պրակտիկայի արդեն նաև տեսականորեն ինքնահասկացման ու գիտականորեն ներկատարելազործման փուլ: Եվ կոնկրետ գիտամեկնությունների («էկզեգետիկայի») հետ մեկտեղ հասկացման ու մեկնության բուն տեսությանը նպատակամետ խորիրդածություններով «աստվածաշնչյան հերմենևտիկայի» սկզբնադրումը էական ազդակ է հանդիսանում նաև ամբողջական քրիստոնեական ուսմունքի կամ աստվածաբանության արդեն գիտա-տեսական ներկառուցվածքով կայացող զարգացման:

Ըստ իս, կարելի է ամրագրել, որ տեսական աստվածաբանությունը իմացակարգ ու հենց գիտություն է՝ ամենայնի որպես այդպիսին առ Աստված համագոյության բանահասության (հասկացման) ու մեկնության: Ահավասիկ, հասկացումն ու մեկնությունն ինքնահասկացող և ոչ սուկ անհատական օժնվածություն, այլ արդեն որպես մեկնազիտություն ու հենց ընդհանրական գիտելիք կայացման ազդակով ևս զորացյալ քրիստոնեական ուսմունքը կամ աստվածաբանությունը տեսաբործնական իր կատարումի խնդրակարգով վերաներկայանում է որպես մեթոդաբանորեն ինքնահասկացող, գործնականը տեսականացնող ու վերաճշմարտող կառուցակարգմամբ ներկատարելազործվող գիտահայեցակարգ, իմաստության գիտություն ու բարու կենազործում:

Արդարն, մարդկային ինքնության, կյանքի ու մշակույթի՝ առ կատարելություն վերընթացությանը հոգենսպասու ու կենարար ասելիք իրենում պարունակող Աստվածաշունչ Գրոց ստույգ հասկացման հոգեոր կարիքով ու պահանջարկով պայմանավորված ինքնին հասկանափ ու ակներևորեն պատճառաբանված էր նկատվում քրիստոնյա սուրբ հայրերի հոգեոր փորձառությունից քրիստոնեական ուսմունքի զրամշակույթում կոնկրետ գիտամեկնողական (էկզեգետիկական) երկերի ստեղծումը: Սակայն նրանց հոգեոր փորձառության ինքնահասկացումից արդեն նաև

Սուրբ Գրոց ստույգ բանահասության տեսության, նույնն է թե՝ հասու լինելու, այսինքն՝ բուն հասկացման ու մեկնարկացման հայեցակարգի և ուրեմն՝ մեկնագիտության (հերմեննետիկայի) գործ տեսական երկերի ստեղծումն ու ներկայակցությունը քրիստոնեական գրամշակույթում չի դիտարկվել որպես նույնանակերպ ու նույնաշափ ինքնին հասկանալի, ակներևորեն պատճառաբանված ու անվիճակը էլի: Ինչո՞ւ:

Ս. Օգոստինոսն այս հարցին հանգամանալից, իմաստվորումով հանդերձ չ' անդրադարձել է «Քրիստոնեական գիտություն» աշխատությունում՝ մեկնագիտական իր խորհրդածությունները կառուցակարգող կ որպես ամբողջական հայեցակարգ կայացնող էական հասկությունները առարկան ու կատարումը, հայտորոշող իր հանրահայտ այդ երկի «ուղեսկզբում» ու բուն «նախաշավալիդում»<sup>7</sup>: «Ամենայն գոյի գոյության» և կոնկրետորեն՝ «մեկնագիտության գոյության» ուսումնասիրության խնդրակարգի լուծումը՝ «մեկնագիտության խսկությունը հայտող իմաստի, որում և իմաստության խորհուրդի հասկացումն ու մեկնողաբար բացորոշումը», ի՞նչ ուղենչմամբ և բաղադրատարք խնդիրների ինչպիսի կարգավորությամբ է իրագործելի դառնում և՝ սկզբունքորեն, և՝ կոնկրետ իր կերպարությամբ հենց Օգոստինոսի աշխատությունում: Հարցերի ինչպիսի ընթացակարգով կամ ի՞նչ խնդրակարգով է անհրաժեշտ ու նախընտրելի կազմակերպել ամենայն կամ որևոր մասնավոր գոյի, աստ մեկնագիտության գոյության որպիսության ուսումնասիրությունը:

Ինչպես և նշում է Դավիթ Անհաղթը՝ ուսայլ իին հույն իմաստաերներից, գրեթե ամենայն իրողությունների առնչությամբ ընդունված է մասնաբաժնորեն քննա-խորհրդածությունն իրագործել չորս հարցադրությամբ՝ «գոյություն ունի՞ արդյոք», «ի՞նչ է», «ինչպիսի

<sup>6</sup> Բուն հասկացումը մարդկային ներանձնական խոհընթաց է՝ առաջնահերթորեն կայանում է անձին ներաշխարհում և անձի կողմից որևիցե բան հասկանալը դեռ չի նշանակում նաև այլոց նույնորեն հասկանալի դարձնել այն, որ և իրագործվում է մեկնությամբ: Թեև հարկ է նշել, որ հասկացման մեջ արդեն իսկ ներկա է դեռ միայն անձին ներիսպատ ու հենց ներիմաց որոշաշափ մեկնորոշում և այնուհետև միայն իրագործվում՝ այլոց մատչելիություն ու նույնպես բանահասու լինել հնարավորող մեկնություն (տե՛ս Քոչարյան Ռ., Կրթություն և Տերմեննետիկա. Կրթություն առ իմաստություն, Եվլուպինստ, Եր., 2018, էջ 170-171):

<sup>7</sup> Августин Блаженный, Христианская наука, или Основания св. Герменевтики и церковного красноречия, Киев, 1835, с. 12.

ինչ է», «ինչի՝ համար է»<sup>8</sup>: Ահավասիկ, Դավիթ Անհաղթից ուսալ համախոհությամբ՝ իմաստավիրության կամ որևիցե այլ գիտության և աստ՝ նաև հենց մեկնազիտության վերաբերյալ քննախոհության ենթակա առաջիկա հարցերը վերոնշյալ չորսն են՝ ա) «գոյություն ունի, արդյո ք, մեկնազիտությունը», բ) «ի՞նչ է» և գ) «ինչպիսի՞ ինչ է մեկնազիտությունը», կամ որ նույնն է՝ «որպես ի՞նչ գոյություն ունի մեկնազիտությունը», դ) «ինչի՝ համար է մեկնազիտությունը»: Նշանակած չորս հարցադրումներով ամբողջացող նպատակային խնդրակարգի համաձայն իրագործելով ուսումնասիրությունը, բացահայտելի է դառնում մեկնազիտության բնությունը, այսինքն՝ մեկնազիտության որպիսությունը՝ որպես այդպիսին գոյության խևությունը: Իսկ բացահայտել մեկնազիտության իսկությունը հայտող իմաստը, կնշանակի՝ բացահայտել նրա գոյության հենց սեփական իմաստը:

Օգոստինոսն իր աշխատության նախաշավդում «մեկնազիտության գոյության» առնչությամբ ուղղակիորեն ու բառացիորեն չի ձևակերպում այդ խնդրակարգը, ինչպես որ Դավիթ Անհաղթն այն իր ամբողջական ու նաև մասնաբաժան հարցադրությամբ իրագործում է «իմաստասիրության գոյության» առնչությամբ: Եվ այնուամենայնիվ, իր այդ նախաշավդում նա հայտնում է իր դիտավորությունը կանխասացությամբ անդրադառնալով և չորրորդ հարցին՝ «ինչի՝ համար է մեկնազիտությունը», և սկզբունքային հետևողական մտաքննությամբ պատասխանում առաջնային հարցին՝ «գոյություն ունի», արդյոք, մեկնազիտությունը»: Իսկ արդեն աշխատության չորս գլուխներում նա անդրադառնում է երկրորդ և երրորդ հարցերին՝ «ի՞նչ է մեկնազիտությունը» և «ինչպիսի՞ ինչ է մեկնազիտությունը»: Ընդ որում, առաջին գլխում նրա քննախոհության «խնդր բանը» մեկնազիտության ուսումնասիրության բազմաբնակ առարկայի ու դրա բազմաբնակության հատկորոշումն է: Իսկ երկրորդ գլխում շարունակելով առարկայի ուսումնասիրությունը՝ նրա քննախոհության «խնդր բանը» մեկնազիտության ուսումնասիրության ենթակա նշանների որպիսության բազմությունն է: Երրորդ գլխում նա բացորոշում է Սուրբ Գրոց բազմիմաստությունը ու դեռ միայն մասնաշափ մեկնազիտության կատարումը՝ քննարկելով դուստիստ Տիկոնիուս

<sup>8</sup> Դավիթ Անհաղթ. Սահմանը իմաստասիրութեան - Երկասիրութիւնը Փիլիսոփայականը, Եր., 1980, աշխատասիրությամբ Ս. Արևշատյանի, էջ 29:

Աֆրիկացու՝ Գրոց մեկնության յոթ կամանները և արդեն չորորորդ զիսում մեկնագիտության կատարումը ներկայացվում է լիարժեքորեն:

Իր երկի առաջին իսկ տողերում նա նրբմիտ ճշգրտությամբ հայտնում է էական միտք. «Կան Սուրբ Գրերի իմաստին բանահասու լինելու (հասկանալու – Ռ.Ք.) հայտնի կանոնները<sup>9</sup>, իմ փորձառնությունում իսկ տեսնում եմ, որ դրանք ոչ առանց օգտակարության կարելի է ուսուցանել Աստծո խոսքը սիրողներին, որպեսզի նրանք ոչ միայն հաջողությամբ կարողանան ընթերցել Սուրբ Գրոց մեկնիչներին, այլև իրենք իսկ բացատրեն այն այլոց<sup>10</sup> (ընդգծումը՝ Ռ.Ք.): Բայց ասել է՝ «հայտնի կանոններ»: Արդյո՞ք, Օգոստինոսն իր երկը գրում էր Սուրբ Գրոց իմաստի հասկացման ու մեկնության արդեն հայտնի կանոնները, անհրաժեշտ տեսնվող հիմնավորությամբ հանդերձ, առավել բացահայտ ներկայացնելու համար քրիստոնյա հավատացյալ ուսումնասերին: Հետազոտողները նրա այս մտքում բուն ասացյալի հետ մեկտեղ հիմնականում կարող են արձանագրել որպես կանխասացությամբ ակնարկ Տիկոնիուսի աշխատությանը Աստվածաշունչ Գրոց մեկնության կանոնների վերաբերյալ, որոնց և մանրամասնորեն Օգոստինոսն անդրադառնում է իր երկի 3-րդ զիսի 42-56 կետերում<sup>11</sup>: Սակայն, արդյո՞ք, նրա վերումեջբերյալ միտքը սպառվում է միմիայն իրեն արդեն հայտնի՝ Սուրբ Գրերի հասկացման ու մեկնության որևոր մեկնագիտական աշխատություններում հայտորոշված կանոններին հղող ակնարկով: Ըստ իս, նրա այս մտքում բովանդակյալ ու հայտնյալ է ավելին, նախ և առաջ՝ «Սուրբ Գրոց մեկնիչներ» ասելով, արտահայտում է իր լիահավատությունը Պողոս Առաքյալի այն մտքին, թե կան զանազան շնորհներ (Կորնթ. Ա, ԺԲ; 4-11) ու այդ թվում՝ նաև մեկնության շնորհ որպես հենց շնորհ իմաստության, զիտության, թարգմանության, և կան անձինք, որոնց և Աստծուց տրված է այն ու ամենքը չե, որ ունեն նույն շնորհները (Կորնթ Ա, 28-31): Օգոստինոսն այդ հավաստում է՝ իր խոսքում ներառելով նաև ակնարկ, որ Աստվածաշունչ Գրոց իմաստի ստույգ հասկացում ուսուցանող այդ կանոնները զորունակ են այդ

<sup>9</sup> Անգլերեն՝ *Christianity and the Four Gospels* մեջ՝ «որոշակի կանոններ» (տե՛ս Saint Augustine, On Christian Doctrine, in Four Books, Grand Rapids, MI: Christian Classics Ethereal Library, p. 5):

<sup>10</sup> **Ավգուստին Բլаженний**, Християнская наука, или Основанія св. Герменевтики и церковного красноречія, Кіево-печерская Лавра, Київ, 1835, с. 1.

<sup>11</sup> Տե՛ս **Ավգուստին Բլаженний**, Християнская наука, или Основанія св. Герменевтики и церковного красноречія, Кіево-печерская Лавра, Київ, 1835, էջ 211-238:

ընթերցանությունից իմաստության ուսումնասեր ամենքին նպաստելու Սուրբ Գրոց մեկնաշների ու իրենց մեկնությունների ընթերցման ու հասկացման հաջողությանը<sup>12</sup>: Եվ երկրորդ՝ նույն այս մտքում նա ակնարկում է իր փորձում իսկ հավաստացումը<sup>13</sup>, որ ստույգ իմաստի բանահասու լինելու (նույնն է թե հասկանալու) ու մեկնարանելու այդ կանոնները իրենց հենց այդ որպիսությամբ (որպես կանոն)՝ սկզբունքորեն ընդհանուր են և ուրեմն՝ մտահասու ու իմանալի են Աստվածաշունչ Գրերով հայտնյալ իմաստության ուսումնասեր ամենքին: Անավասիկ, հասկացման ու մեկնության կերպում (մողուսում) և-կամ եղանակում ընդհանուրը (այսինքն՝ կանոնները) իմացահայտելով՝ Օգոստինոսը Սուրբ Գրոց հասկացումն ու մեկնությունը ոչ միայն ինքնին իրենցում ներհայտում է որպես անհատների հասուկ առանձնաշնորհներ, այլև այնչափ, որչափ և դրանք հնարավոր են որպես «ընդհանուր գիտելիք» (կանոն) և ուրեմն՝ իրենց այդ ընդհանրական բնույթով պայմանավորված՝ արդեն նաև դրանց ուսուցանելիության և ուսումնառելիության հնարավորությամբ առհայտում է ու մարդկային կյանքում հասկացումն ու մեկնությունը ներկա է դարձնում արդեն ընդհանուր գիտական կարգավիճակով՝ ուսուցանելի աստվածային իմաստության ուսումնասեր ամենքին, ըստ յուրաքանչյուրի անհատական և երբեմն աստվածային շնորհով օժտվածությամբ՝ նաև առավելացող կարողունակության: Այսպիսով, վերոասացյալից եղանակնամամբ կարելի է կրկնազգրել կանխասացությամբ վերոակնարկյալը, որ Օգոստինոսի մտքում «հայտնի կանոնները» (կամ «որոշակի կանոնները») ոչ միայն կարող են իմացահայտել ու վկայել իրենից առաջ այլ մեկնագետների կանոնների մասին, այլև առաջնահերթորեն այն, որ հենց իր հոգեկործառությամբ իսկ ներքին հավաստացումով, հիրավի, կան Սուրբ Գրոց ստույգ իմաստին բանահասու լինելու կանոններ սկզբունքորեն իմանալի ու կիրառելի Աստծո խոսքի ու հենց իմաստության ուսումնասեր ամենքին:

Օգոստինոսը որպես իր մեկնագիտական երկի նախադրություն կամ նախաշավիդ քննախոհ նախատեսումով պատասխանում է Սուրբ Գրոց գիտամեկնության (էկզեգետիկայի) տեսության գոյության,

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 1:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը:

Նույնն է թե՝ մեկնագիտության գոյության, ուստի և՝ դրա ուսուցարար և ուսումնառելի հնարավորության ամենայն ընդդիմաբանողներին, եւրքողներին ու իր մեկնագիտական երկի հնարավոր պարսավողներին, որոնք աստվածադիր համարելով ու թողատրելով միմիայն առանձին աստվածների անձանց բանահասության (հասկացման) օժտվածությունն ու մեկնաշնորհը, ժխտում են աստվածաշունչ տերստի բանահասության ու մեկնարանության ընդհանուր կանոնների ու մերօդների գոյությունը և այդկերպ նաև բացարկում մեկնուսույց գրականության ու վարդապետության, կնշանակի՝ թե՝ ուսուցանելիության և թե՝ ուսումնառելիության հնարավորությունը։ Կանխատեսվող ընդդիմաբանողներին՝ ի պատասխան և իր երկի ընթերցող՝ իմաստության ուսումնասերին՝ Սուրբ Գրոց բանահասու գիտությանն անսայթաք վերընթացությանը՝ ի նպաստ եղված իր նախաշավակում Օգոստինոսը նկատի ունի մեկնության ընդհանուր կանոնները և ուրեմն՝ մեկնագիտության գոյությունն ու մեկնուսուցման հնարավորությունը եւրքողների և իր երկի գոյության իմաստն անզամ հարցականի տակ դնող ու բացարկող ամենայն քննադասների ու պարսավողների եռատեսակ բնորոշում։

ա) անձինք, որոնք չեն հասկանում այդ կանոնները և նրանց ժխտական վերաբերմունքը հենց չհասկացման արդյունք է<sup>14</sup>,

բ) անձինք, որոնք հասկանալով կանոնները, չեն կարողանում կիրառել ու օգտվել դրանցից Սուրբ Գրոց ստույգ իմաստին բանահասու լինելու ու մեկնարանելու խնդրում, ուստի և նրանց բացասական վերաբերմունքը կանոններից օգտվելու ու կիրառելու անկարողությունն է<sup>15</sup>,

գ) անձինք, որոնք իսկապես լավ են բացատրում Սուրբ Գիրքը կամ գուցե այդպես են մտածում իրենց մասին, և եթե այդպիսիք «ձեռքբերել են կարողություն (իսկական կամ թվայցալ) Գիրքը մեկնաբանել առանց այն կանոնների օգնության, որ և ինքը մտադիր է շարադրել, ապա նրանք ճշալու են իրքն թե այդ կանոնները ոչ մեկին պետք չեն և դրանցում ուսուցանվող ամենայնը Սուրբ Գրոց մթին տեղիների վերաբերյալ կարող է իմանալի ու հասկանալի լինել միմիայն ի վերուստ աստվածային պարզենով»<sup>16</sup>:

<sup>14</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 2:

<sup>15</sup> Տե՛ս նոյն տեղը:

<sup>16</sup> Նոյն տեղում, էջ 2-3:

Օգոստինոսը ներքին հոժարակամությամբ իրեն պարտավորեցնում է պատասխանել մեկնագիտության այսկերպ հնարավոր հերքողներին, որպեսզի Աստվածաշունչ Մատյանի ամենայն ընթերցաւերն ու իմաստության ուսումնասերն այդ բացատրություն-պատասխաներով զինյալ և իր երկով Գրոց ստույգ իմաստի հասկանալու ու մեկնաբանելու խնդրում առաջադիմելու հնարավորություն ունենալով, մեկնագիտությունն ու նաև դրանով մեկնուսույց հնարավորությունը բացարկող քննադատների ու պարսավողների խորին հանկարծ ականջալուր կենսադեպին լինի զիտակ ու կարողունակ զգայթել իր մորքին, հոգուն ու կյանքին նպաստարար ու պիտանի, հոգեոր վերընթացությամբ ներկատարելագործող զբաղմունքից՝ անզետ անրանության<sup>17</sup>: Ըստ նրա, իր կանոններին անիմս ու ոչ հասու անձինք իրենց շիասկացման համար պետք է մեղադրեն ամենին կ ոչ իրեն, ըստ այն կերպօրինակի թե կամենան տեսնել նոր լուսին ու ոչ պարզերեւ աստղեր, որ և ինքն կ մատնացույց անի, անկարող լինեն ու տեսողության սրությունը չբավի նկատելու ոչ միայն լուսինն ու աստղերը, այլև նույնիսկ իր մատը: Իսկ նրանք, ովքեր հասկանում են իր կանոնները և, սակայն, անկարողունակ են օգտվել-ու կիրառել, ըստ այն կերպօրինակի են, թե կարողունակ լինելով տեսանել մատը, անզոր ու անկարողունակ են նշմարել իրենով մատնացույց լուսինն ու աստղերը<sup>18</sup>: Արդ և առաջինները, և երկրորդները «հարկ է ձեռնպահ լինեն մեկնագիտական իր երկի պիտանիությունը բացարկող անհարկի դատողություններից և իրենց ականց լուսավորման համար պետք խնդրեն ի վերուստ աստվածային լույսի շնորհը»<sup>19</sup>:

Իսկ ընդհանուր կանոնների և որեմն մեկնագիտության ու մեկնուսույց հնարավորության մյուս ընդիմաբանողներին ու բացարկողներին՝ իրենցում աստվածային շնորհով պարծեցոր և առանց իր երկում ուսուցանվող որևսոր մեկնության կանոնների՝ Գրոց իր երկում ուսուցանվող որևսոր մեկնության կանոնների շնորհանահասության ու մեկնորոշման իրենց կարողությանն անձնաբանական պատասխանի մեջ ապահովություն համարող պատասխան ու մեկնագիտական իր երկն ավելորդություն համարող անձնանց Օգոստինոսը, թեկուց և համախոն աստվածային շնորհով

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 2:

<sup>18</sup> Տե՛ս Августин Блаженный, Христианская наука, или Основания св. Герменевтики и церковного красноречия, Киево-печерская Лавра, Kiev, 1835, էջ 2, 3-4:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 4:

իրավամբ իրենց հիացմանը, հիշեցնում է, որ առնվազն այրութենին նրանք ուղղակիորեն Աստծուց չեն ուսանել, այլ մարդկանցից: Եվ նրանք ամենին ել վատ չեն համարել, որ այդ հարցում չեն նմանվել Աստուն ձգնավորին, ով առանց ուսումնառության ու գիտության, այլ միայն լամամբ՝ մտանել ու կատարելապես բանահասու էր Սուրբ Գրոց ողջ բովանդակությանը, ինչպես նաև այն բարեպաշտ անձին, որ վստահելի անձանց վկայությամբ՝ ոչ որուց ուսայալ գրագիտության, այլ Գրոց խորհրդիմացության միայն երեքօրյա աղոթքով առ Աստված հանկարծ սկսեց վարժ ու հստակ ընթերցել իրեն բերված Աստվածաշունչը<sup>20</sup>: «...Մեծ բարեշնորհությամբ օժտված այդպիսի անձինք, եթե միայն իրավ ունեն այդ շնորհը, ինչպես ել դատեն, անհրաժեշտորեն պետք համաձայնեն ինձ հետ գոնե նրանում, որ մանկուց մեզնից յուրաքանչյուրն իր բնական լեզուն է ուսանում հաստատուն ստվորությամբ լսելով այն ուրիշներից, ուսայալ է նաև որևիցե այլ լեզվի կամ նույնորեն լսմամբ, կամ որևէ վարժապետի միջոցով՝ ոչ Աստծո, այլ պարզապես մարդու»<sup>21</sup>: Եվ արդյո ք, մեկնաշնորհ ունեցող կամ իրենց այդպիսին կարծող անձինք լրիվ կամ լիարժեք քրիստոնյա չեն համարելու նրանց, ովքեր մարդկանցով միջորյալ ուսմամբ են լեզուների տիրապետում, այլ ոչ առաքալների նման միայն աղոթքով ակնրարթորեն ու ոչ ուսմամբ ստանալով լեզուներ խոսելու շնորհ ուղղակիորեն ու անմիջականորեն Աստծուց: «Յուրաքանչյուրը թող առանց հպարտության ուսանի մարդուց այն, ինչը հարկ է ուսանել մարդկանցից. հավասարապես և այլոց ուսուցանողը թող առանց հպարտության ու նախանձի ուսուցանի այն, ինչն ինքն է ձեռքբերել»<sup>22</sup>:

Ամենայն բարյաց ուսուցանության Աստծուց է, որ և մարդկային կյանքում ներկայունակ է անիմիջականարեն Իրենով, երեշտակների և կամ մարդկանց միջոցով: Եվ մարդիկ կարող են ուսանել միմյանց տեսագրքնական շնորհներից, այնչափ, որչափ մարդկային ինքնության շնորհով ներիմա իմաստության խորհուրդն ու կատարումը հնարավոր է մարդկանց միջն ընդհանրանակության՝ տրվելի ու հենց կրթունակ է նրանց տեսա-իմացունակությանը և կենսա-գործունակությանը: Եվ որևիցե բարին ուսանել մարդուց, ամենին ել չի նշանակում՝ շուսանել

<sup>20</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 4-5:

<sup>21</sup> Նոյն տեղում, էջ 5-6:

<sup>22</sup> Նոյն տեղում, էջ 6:

Աստծուց, այլ հենց ուսանել Աստծուց՝ մարդու միջնորդությամբ: Հստ Օգոստինոսի, եթե անձը մերժելով մարդուց ուսանելը, ակնկալում է անմիջականորեն աստվածային շնորհով միմիայն ձեռքբերումը, արդյո ք չի փորձում Աստծուն: Նա ըստ տերունական խոսքի ու դրանում բովանդակյալ խորհուրդի, թե «մի՛ փորձիր Աստծուն», հորդորում է զգուշանալ իսկությամբ կամ պատրանոր մեկնաշնորհ ունեցող՝ իր աշխատությանն ընթիմաբանոր ամենքին՝ Աստծո և աստվածայինի ներկայությունն իրենցում միմիայն շնորհով օժտվածությամբ ու հենց սեփական անմիջական փորձառությամբ, այլ ոչ այլոց իմացությունից ուսմամբ հնարավորող թյուր մտքից:

Այս առնչությամբ նկատենք, որ և այս, և այլ հիմնավորումներում ու եզրահանգումներում Օգոստինոսը ոչ միայն տեսականորեն իմացահայտում է քրիստոնեական գիտության՝ կրթանշանակ խորհուրդ ներբովանդակող դրույթներ, այլև գործնականորեն իսկ ներկրթում ամենայն ուսումնասեր անձանց ինքնությունը, կյանքն ու գործունեությունը քրիստոնեական իմաստության:

Իր երկի նախաշավիդում Օգոստինոսը հիշեցնում է, որ Ավետարանում ևս պատմվում են Աստծո այնպիսի գործերի ու այդ թվում՝ ուսուցանության մասին, որոնք կատարվել են ոչ միայն անմիջականորեն Իրենով կամ հրեշտակի միջոցով, այլև հենց մարդկանցով միջնորդավորմամբ: Օրինակ նախապես հենց Ինքը Քրիստոս Աստված Պողոսին երևալով ճանապարհին և գետնընկեց անելով ու աստվածային խոսքով խրատելով, որպեսզի բացվի իր տեսողությունը և լցվի Սուրբ Հոգով, այնուհետև առաքվեց մարդը Անանիան, նրա և առողջացման, և խորհուրդների ընդունման ու եկեղեցում ներնդգրկման համար (Գործք Առաքելոց, թ, 3-18), կամ Կոռոնելիոս հարյուրապետի աղոթքի մեջ տեսիլքում հրեշտակի միջոցով պատվիրելով՝ մարդ առաքել ու կանչել Պետրոսին, դարձյալ մարդու միջոցով ուսուցանվեց, թե՝ ով իսկ է Տերը՝ Յիսուսը, ում և միայն արժան է հավատալ, հուսալ սիրել (Գործք Առաքելոց, ժ, 1-48)<sup>23</sup>:

Անշուշտ, ամենայն ինչ ուղղակիորեն ու անմիջնորդավորված կարող է կատարել Ինքը՝ Աստված և կամ հրեշտակի միջոցով, սակայն մարդուն է ընտրել որպես տաճար Աստծո<sup>24</sup> և նրա միջոցով ևս

<sup>23</sup> Св. Августин Блаженный, Христианская наука, или Основания св. Герменевтики и церковного красноречия, Киево-печерская Лавра, Киев, 1835, кг 7-8:

<sup>24</sup> Св. у лույս տեղը, кг 8:

հայտնում է իր խոսքն ու կամքը, այդկերպ մարդկանց միջև ամրապնդելով սերը: Ինչպես և ուսուցանում է Օգոստինոսը, նվազ կիններ մարդու դերը, եթե աստվածային կամքն ու խոսքը հաղորդվեր միայն հրեշտակի միջոցով: Իսկ մարդկանց միջև միասնություն ստեղծող ու ամրապնդող հոգևոր սերն իրեն ուղղավիրուն աջակից միջոց ունի ուսուցանությունը հենց մարդկանց միջոցով<sup>25</sup>: Արդարն, Աստված տալիս է մարդկանց շնորհներ՝ առ ուսուցանություն մարդկային կյանքի պիտոյից, որով և կոչում, հնարավորություն է ընձեռում ու նաև բարենպաստում իմաստության ուսումնասեր ամենայն մարդկանց միմյանց նկատմամբ սիրով զորացող ու ամրապնդվող համագործակցությամբ, մեկ-մեկու շնորհներով իսկ՝ աստվածահաճու ու փրկանպաստ ներքին ու արտաքին կյանքի ամենայն տեսա-գործնական պիտոյից, ճշմարտության ու բարու բացահայտման ու կենագործման, երկնից արքայության ժառանգորդ լինելության ուսուցանության և ուսումնառության<sup>26</sup>:

Օգոստինոսը մեկնագիտության գյությունն ու մեկնասուցման հնարավորությունը հաստող իր աշխատության բուն իդեալի ու նաև այդ իդեալին մտահայեցող դիտավորության ու կատարումի, ուստի և ամենայն հնարավոր ընդիմաբաններին իր պատասխանի ճշմարտությունը հավաստում է Հին ու Նոր կտակարանների խորհրդապատումի այլ օրինակներով ևս: Առաքելական թղթերում հիշատակված ներքինին Եսայի մարգարեին ընթերցելով և առաջյախն խոնարհությամբ խոստվանելով, թե՝ ինչպէ՞ս ինքը կարող է հասկանալ ասացյալը, եթե որևէ մեկն այն չմեկնորոշի ու իրեն չուսուցանի, արդարն, ոչ թե մտքի ներքին պայծառացմամբ և ոչ է հրեշտակի միջոցով Աստված իմացահայտեց այն, ինչը չեր հասկանում, այլ հենց մարդու Փիլիպոսի, միջոցով մարդկային խոսքերով բացատրեց նրան անհասկանալի մարգարեությունը: Սուրբ ու իմաստուն հայրը որպես աստվածայինի մարդու միջնորդությամբ ուսուցման մեկ այլ կերպօրինակ ևս վկայաբերում է, որ Մովսեսն անզամ, ում հետ հետ հնքը՝ Աստված էր խոսում, առանց հպարտության ընդունեց իր այլազգի աներոջ խորհուրդը՝ բազմաբանակ ժողովրդի կառավարման խնդրում, «քանի գիտեր ու է տա ճշմարիս ու պիտումի խորհուրդ, այն հարկ է վերագրել

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղը:

ոչ խորհրդատուի անձին, այլ Նրան, մել ինքը ճշմարտությունն է՝ նախահավիտյան Աստծուն»<sup>27</sup> (ընդգծումը՝ Ռ. Ք.):

Սիարերելով վերոասացյալը կարելի է ամրագրել, որ Օգոստինոսի մեկնազիտական հայեցակարգը հայտորոշում է Աստվածաշունչ Գրոց մեկնաւթյան որպես այդպիսին՝ ընդհանրական գիտելիքի գոյության էականորթեն նշանակալի հնարավորություն։ Նրա մեկնազիտական հայեցակարգը բացորոշվում ու ամենքին մտահայտում է բանահասության (հասկացման) ու մեկնության իսկության ընդհանուր խորհրդիմացություն ու իմաստության գիտելիք՝ Աստվածաշունչ Գրերում ասացյալի բուն իմաստությունը ներբովանդակելու ու նաև հայտնելու ընդունակ դիտավորությամբ ու ըստ այդմ՝ կերպարանումով ու կատարումով։ Իմաստությունը ներկա ու կերպացյալ է արարյալ ամենայնի, որում և՝ մարդու, գոյությունում ու նաև Աստվածաշունչ Գրերում, և, որպես շնորհ, ներկա է նաև մեկնազիտությամբ բացահայտելի՝ մարդկային ստույգ բանահասության ու մեկնության կերպում (մողուսում), որով իսկ հասկացման ու մեկնության փոխներկուակած միասնականությունը զորունակ է դառնում իրենում բովանդակել ու իրենով իսկ արտահայտել և՝ ամենայն գոյի որպես այդպիսին (ըստ իր բուն կոչման) գոյությունում կերպացյալ, և՝ Աստվածաշնչյան Գրերում ներբովանդակյալ աստվածային իմաստություն։ Կարելի է մտքի հակիրճ բանաձևմամբ ամրագրել, որ Օգոստինոսի մեկնազիտությունը բացահայտում է բանահասության ու մեկնության «Փնչը»։ Աստվածաշունչ Գրոց իմաստությունը, իրենցում բովանդակելու ու հայտնելու անհրաժեշտորեն ու նախընտրելիորեն հնարավորող «Փնչակ» կերպառությունը։

### ԱՍՓՈՓՈՒՄ

Ս. Օգոստինոսի «Քրիստոնեական գիտությունը» աշխատությունը ոչ թե սուկ եկեղեցական քարոզիչության կամ հոեսորության, այլ բանահասության (հասկացման) ու մեկնության ընդհանուր և սկզբունքորեն ուսուցանելի կանոնների ու մեթոդների և, այդպիսով, մեկնազիտության (հերմենևստիկայի) գոյությունն ու մեկնուսուցման հնարավորությունը հաստատագրող քննախոնդություն է։ Ի տար-

<sup>27</sup> Նոյն տեղում, էջ 9։

բերաւթյուն իր ընդդիմարան՝ մեկնաշնորհ ունեցող Եկզեգետների, որոնք մեկնաւթյունը դիտում են որպես աստվածային շնորհ և ժխտում մեկնագիտության ու մեկնուսուցման հնարավորությունը, Օգստինոսը ևս լինելով մեկնաշնորհ ունեցող անձ և ընդունելով շնորհի գաղափարը, իր աշխատության ներածությունում հիմնավոր փաստարկներով գոյադրում է նաև մեկնագիտությունը, որով և՝ Սուրբ Գրերի ստույզ իմաստի հասկացման ու մեկնուսուցման, այսինքն աստվածայինի մարդով միջնորդավորվող ու իրագործվող ուսուցանության և ուսումնառության հնարավորությունը:

Բանալի բառեր՝ Եկզեգետիկա, հերմենևտիկա, Սուրբ Գրեր, բանահասություն, իմաստություն:

## ПОНИМАНИЕ И ИНТЕРПРЕТАЦИЯ СВЯЩЕННОГО ПИСАНИЯ В ХРИСТИАНСКОЙ ДОКТРИНЕ СВ. АВГУСТИНА: ДАР ИЛИ НАУКА? (СОСУЩЕСТВОВАНИЕ ЭКЗЕГЕТИКИ И ГЕРМЕНЕВТИКИ)

Ромик Кочарян

Кандидат философских наук,  
старший научный сотрудник, «Матенадаран» имени Маштоца

### РЕЗЮМЕ

Трактат св. Аврелия Августина «Христианская наука» не является лишь исследованием в области гомильтики или церковной риторики. В нём исследуется основополагающая проблематика формулировки общих и доступных обучению правил и методов понимания и толкования, тем самым и утверждается существование герменевтики и возможность научения уразумению (пониманию) и толкованию Писания. В отличие от возможных критиков его труда – экзегетов, рассматривающих толкование святых текстов как божественный дар и отрицающих возможность герменевтики и научения толкования, Августин, также принимающий идею божественного дара, во введении к своему трактату логическими и богословскими аргументами обосновывает существование науки герменевтики – общих правил и методов понимания точного смысла и толкования Писания, а посему – возможность научения: обучения и усвоения божественного посредством человека.

**Ключевые слова:** экзегетика, герменевтика, Св. Писание, понимание, уразумение, мудрость.

**UNDERSTANDING AND INTERPRETATION OF THE HOLY SCRIPTURE  
IN THE CHRISTIAN DOCTRINE OF ST. AUGUSTINE: GIFT OR  
SCIENCE?  
(THE CO-EXISTING OF EXEGESIS AND HERMENEUTICS)**

**Romik Kocharyan**

*Candidate of Philosophical Sciences,*

*Senior Researcher of the «Matenadaran» after Mashtots*

**SUMMARY**

The tractate of St. Aurelius Augustine "On Christian Doctrine" is not only a study in the field of homiletics or church rhetoric. It explores the fundamental problematic of formulating general and accessible rules and methods of understanding and interpretation, thereby confirming the existence of Biblical hermeneutics and the possibility of learning true mode of understanding and interpretation of Scripture. In contrast to the possible critics of his work – the exegetes, who consider the interpretation of holy texts as a divine gift and who deny the possibility of hermeneutics and the teaching of interpretation, Augustine also accepting the idea of a divine gift, in the introduction to her treatise with logical and theological arguments, substantiates the being of Biblical hermeneutics – general rules and methods of understanding and interpretation of true meaning of Scripture, and therefore – the possibility of teaching and learning the divine through man.

**Key words:** exegesis, hermeneutics, Holy Scripture, understanding, interpretation, wisdom.

**РАЗРАБОТКА ПРИНЦИПОВ ТРАДИЦИОЛОГИИ  
Э.С. МАРКАРЯНОМ /1929-2011/**

**Саргис Айрапетян**

*Кандидат философских наук, доцент,*

*Армянский государственный экономический университет*

Известный культуролог, доктор философских наук, профессор Эдуард Саргисович Маркарян более полувека был сотрудником Института философии, социологии и права НАН РА, в котором он с